

ԱՇՈ ՃԱՌՆՏԻՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ*

ՆԱԶԵՆԻ ՂԱՐԻՔՅԱՆ

Արվեստի տատմ. դոկտ. (Փարիզ)

Մատենադարան, ԵԳՊՄ դոցենտ

Աշո ճառընտիրը (Մատ. 7729, 1202 թ.) տատվավոր տեղ է գրավում Մատենադարանի թանգարանի ցուցադրության մեջ (նկ. 1). այն ոչ միայն ամենամեծ մագաղաթյա հայկական ձեռագիրն է (70,5 x 50)՝ նրբագույն ու ճոխ մանրանկարներով, այլև 1915 թ. ցեղասպանությունից փրկված մշակութային հուշարձանների շարքում ունի բավական արտասովոր տատմություն:

Ձեռագիրը դարեր շարունակ գտնվել է հայոց ամենահին եւ ամենահեռավոր սրբավայրերից մեկում՝ Աշո Սուրբ Առաքելոց վանքում՝ դառնալով վանքի գլխավոր մատյանը եւ «*դատուեալ յամենայն ժամանակի յուխտաւորաց*»¹: Գործածության անհարմարության տատճառով այն երկու մասի է բաժանվել, որոնք առանձին կազմվել են XIX դարի սկզբին²: Բացի այդ, 17 էջ նույն դարում նվիրվել է Մխիթարյանների միաբանությանը: Եղեռնի տարիներին, Առաքելոց վանքի եկեղեցու դռան հետ հավանաբար ձեռագրի երկու կտորներն էլ միասին ճանադարի են ընկել սայլի վրա: Ադա՛ Էրզրումում, անհայտ տատճառներով, մի կեսը թաղվել է եկեղեցու բակում, իսկ մյուսը հասել է Նայաստան: Այստեղ գիշերվա մի ժամի երկու կին թակել են Էջմիածնի վանքի դուռը եւ այդ կեսը հանձնել քնաթաթախ հոգեւորականին, որը շփոթմունքի մեջ չի հասցրել նրանց անունները հարցնել: Իսկ թաղված կեսը մինչեւ 1920 թ. գտել է ռուսական բանակի սղա դե Ռոբերտին եւ, տանելով Թիֆլիս, նվիրել է Նայկական ազգագրական ընկերությանը: Ձեռագրի երկու կեսերը միացվել են Էջմիածնում 1929 թ., եւ 1938 թ. նուտք գործել Երեւանի Մատենադարան³: Երկու էջ էլ 60-ական թվականներին հայտնաբերվել են Մոսկվայի Լենինի անվան ազգային գրադարանում եւ հանձնվել Մատենադարանին: Այսօր, ցավոք, 40 էջ անհետ կորած են⁴:

Սակայն, Աշո ճառընտիրը, բացի թանգարանային բարձր արժեքից, հազվագյուտ նշանակություն ունի նաեւ հայագիտական ուսումնասիրությունների համար:

Նախ՝ ձեռագիրը, հազվադեպ բարեբախտությամբ գրեթե միշտ գտնվելով նույն վանքում, իր մեջ ամփոփել է վանքի *Կոճղը*, այսպես ասած՝ «Բոթուկը», այսինքն՝ Մայր-հուշամատյանը, որտեղ տարբեր ժամանակներում եւ տարբեր առիթներով գրի են առնվել վանքին վերաբերող ամենատարբեր իրադարձություններ,

* Դոկլաձի համար հիմք է ծառայել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Վերադարձ մշակույթ» խորագրով գիտաժողովի զեկուցումը. «Աշո ճառընտիրը եւ իր նշանակությունը հայագիտության համար», Մատենադարան, 28-29 ադրիլ, 2015 թ.:

հիշատակվել դեղքեր եւ դեմքեր: Կոճղը սկսվում է ձեռագրի վերջում ավելացված Գրիգոր Լուսավորչին վերագրվող «Կտակից», ուր նշված են վանքի հիմնադրումը եւ սահմանները: Ըստ Տարոնի իշխան Զորովանել Մամիկոնյանի կողմից «Կտակին» կից գրված հիշատակարանի՝ Լուսավորչի կտակն իշխանն ինքն է հայերեն թարգմանել «հելլեն եւ հոյն» գրերից⁵: Լուսավորչի Կտակին հետեւում է նույն իշխանի «Կտակը», որ նա թողել է 1104 թ., «բազում աշխատութեամբ»:

Լուսավորչի Կտակն իր տեսակի մեջ բացառիկ հուշարձան է եւ հավորդատշաճի չի արժեւորվել դատմաքաղաքական ուսումնասիրությունների համատեքստում: Այն իր բովանդակությամբ եւ նշանակությամբ աղերսվում է կաթոլիկ աշխարհում հայտնի *Constitutum Constantini* («Կոստանդին կայսեր կտակը») փաստաթղթին: Վերջինը VIII դարում թխված կեղծագիր է եւ միտում է ունեցել հաստատելու Պաղական հոգեւոր իշխանության առաջնությունը եւ գերակայությունը՝ աշխարհիկ բոլոր իշխանությունների նկատմամբ⁶: Այս հարաբերության մեջ Սբ. Գրիգորի կտակը, թվում է, կաղվում է նաեւ հայ միջնադարյան իրականության մեջ մեն համբավ վայելող «Դաշանց թղթին»⁷:

Այդա, արժեքավոր են Մշո ճառքնտիրում դասկարգված բազմաթիվ հիշատակարանները եւ հիշատակագրերը՝ մեզ հասած նախագաղափար օրինակի, գրչի, թարգմանչի, ծաղկողի, կազմողների, ստացողների կողմից, որոնք դատմական եւ մշակութային կարեւորագույն տեղեկություններ են դարձնում: Այսպէս, գրիչ Վարդան Կարնեցու, ծաղկող Ստեփանոսի եւ հիշատակություններում նշված այլոց անունների ուսումնասիրության արդյունքում հայտնի է դարձել, որ այն չի ընդօրինակվել Մշո Առաքելոց վանքում, ինչպէս սովորաբար ենթադրվում էր, այլ՝ Բարձր Նայքում, Երզնկայից արեւմուտք, Սեդուհ լեռան վրա գտնվող Ավագ վանքում⁸: Այս վանքը XII-XIII դդ. սահմանագծին բավական ակտիվ է եղել եւ բարձրակարգ գրչատուն է ունեցել, եւ Մշո ճառքնտիրը լրացնում է այստեղ ընդօրինակված եւ ծաղկված ձեռագրերի մասին մեր ունեցած գիտելիքները: Ձեռագրի վերջում գետեղված հիմնական՝ 1205 թ. հիշատակարանից (602-603ա-բ) դարգվում է, որ ընդօրինակման եւ ծաղկման ավարտին դեռեւս չեն հասցրել ձեռագիրը կազմել եւ հիշատակարան գրել, երբ սղանվում է դատվիրատուն՝ բաբերդցի մեծատուն Պատրոն Աստվածատուրը, իսկ ձեռագիրը «բռնագրավում» է քաղաքի դատավորը (դադին) եւ իր հետ տանում է Խլաթ: Երեք տարի անց, Մշո Առաքելոց վանքի հոգեւորականների եւ շրջակայքի բնակիչների հանգանակությամբ ձեռագիրը գնվում է 4000 արծաթով եւ բերվում Առաքելոց վանք, ուր մնում է մինչեւ 1915 թ., այսինքն՝ ուղիղ 810 տարի⁹:

Այս հիշատակարանը արժեքավոր դատմական տեղեկություններ է դարձնում նաեւ Բասենում հայ-վրացական եւ Ռումի սուլթան Ռուքն Էդ դինի զորաբանակների միջեւ տեղի ունեցած ճակատամարտի մասին, եւ օգնում է ճշտել

այդ իրադարձության թվականը եւ վայրը¹⁰ միաժամանակ թույլ տալով որոշել նաեւ հենց ձեռագրի ընդօրինակման թվականները, այն է՝ 1200-1202¹¹:

Այնուհետեւ, ձեռագրի հիշատակարանները կարեւորվում են հայոց ծիսական գրքերի կազմավորման ղափառության համատեքստում: Ձեռագրի սկզբում տառադրանքով վերնագիրը, գրչի նախաբանը եւ վերջում գետեղված հիմնական հիշատակարանը հնարավորություն են տվել տարգելու, որ այս ժողովածուի մայր օրինակը կազմվել է 747 թ., Մաքենյաց վանքի հայտնի վանահայր Սողոմոնի հեղինակությամբ, եւ կոչվում է *Տօնական*: Այդ ժողովածուն տարունակում էր «*գաստուածաբան հայրապետաց զիրաքանչիւրսն ասացեալ ճառս հոգիախառս վարդապետութիւնս...*» եւ «*հոգեդատումն ճառից տատմութեանց, եւ զժողովոց արդարոց զգինութեան գովութիւնս*»¹². այսինքն՝ ինչդեռ աստվածաբանական, մեկնողական բնույթի ճառեր, ներբողներ, այնդեռ էլ տատմագրական հատվածներ, վկայաբանություններ, հրաշադատում տեքստեր: Այս բնութագրումը համադատասխանում է Ճառքնտիրի բովանդակությանը, որը հայրաբանական, վարքաբանական եւ տատմական տեքստերի ամբողջական ընտրանի է՝ քաղված ինչդեռ համընդհանուր քրիստոնեական, այնդեռ էլ հայ հեղինակների գործերից:

Շնորհիվ այս արժեքավոր տեղեկությունների՝ հնարավոր է դարձել վերականգնել «ազգակցական» կաղը հայոց ծիսական գրքերի միջեւ: Ըստ այդմ՝ Մշո ճառքնտիրը, որ նաեւ *Տօնական* է կոչվում, հազվագյուտ միջանկյալ օրինակ է ներկայացնում Տօնականներից *Ճառքնտիր*, *Յայսմաուրք* եւ *Տօնադատճառ*՝ առանձին ժողովածուների սերման շղթայի մեջ: Ավելին, այն թույլ է տալիս հավաստել XII-XIII դարերում *Տօնականի* հիմքի վրա զարգացած ճառքնտիրների մի քանի տարբերակների առկայությունը¹³, ներկայացնելով դրանցից մեկի տեքստային եւ կառուցվածքային առանձնահատկությունները: Այդ անցումային վիճակի մասին տառադրանքով է նույն ժամանակին վերագրելի շատ հատկանշական հիշատակություն՝ գետեղված ավելի ուշ շրջանի մի ժողովածուի մեջ. «*Պատմութիւն սրբոց հայրապետացն եւ վկայից, որ այժմ Ճառքնտիր կոչի, յայլեւայլ լեզուէ թարգմանեալ եղեւ ի ձեռն բազմաց, իսկ յետոյ սուրբ Նայրն Սողոմոն Մաքենեաց հաաքեաց ի մի տուփ եւ անուանեաց Տօնական, քանզի մինչեւ ցայն ոչ գոյր ի մեջ Յայսմաուրք*»¹⁴: Իսկ հետո՝ արդեն XIII դարից սկսած եւ հատկապես XIV դարում, այդ ժողովածուները հստակ տարբերակվում են. *Ճառքնտիրները* տարունակում են աստվածաբանական, մեկնողական եւ ջատագովական բնույթի տեքստեր՝ ճառեր, տատմագրական հատվածներ եւ ներբողներ, *Տօնադատճառները*՝ եկեղեցական տոների ծագումը եւ բացատրությունը ներկայացնող տեքստեր, իսկ *Յայսմաուրքները*՝ եկեղեցու սրբերի, խոստովանողների եւ նահատակների կյանքին, հրաշագործություններին եւ վկայաբանությանը վերաբերող տատումներ:

Մշո ճառընտիրի հիշատակարաններն օգնում են նաեւ տարգելու, որ ձեռագրի անմիջական օրինակի նախատիղ հանդիսացող մատյանը տատկանել է Տարոնի իշխան Չորովանել Մամիկոնյանին, որի 1104 թվականով թվագրված կտակի մասին հիշատակեցինք վերը: Իսկ այդ օրինակն էլ իր հերթին Սողոմոնի *Տօնականի* գաղափար օրինակից է արտագրված եղել¹⁵: Այս փաստարկը ոչ միայն հաստատում, այլեւ բացատրում է մեր ձեռագրի խիստ արտահայտված արխայիկ բնույթը¹⁶, որ «աստուածագեաց, սերովքեատիղ» Սողոմոնի «զվսեմական, գոյածառացուցիչ» հորինվածքի սրբազան տատճենը ամբողջապես, այսինքն՝ թե՛ նյութական, թե՛ բովանդակային առումով հավատարմորեն վերարտադրելու ձգտումն է:

Բայց առավել կարեւոր գիտական փաստը, որ քաղում ենք հիշատակարաններից՝ *Տօնականի*, հետեւաբար նաեւ այս բոլոր ծիսական գրքերի ուղղակի կաղն է հայոց ծիսակարգի հիմնարար ձեռնարկի՝ *Ճաշոցի* հետ:

Ճաշոցների եւ *Ճառընտիրների* կաղնը քրիստոնեական ծիսակարգում քաջ հայտնի է: Դեռեւս VI դարից, լատինական, ինչդեռ նաեւ բյուզանդական եւ ասորական ծիսակարգերում, տոների եւ հիշատակների արարողությունների ժամանակ ընթերցվել են ներբողական եւ վարքագրական տեքստեր, որոնք ընտրված եւ բաշխված էին ըստ տվյալ օրվա թեմատիկայի եւ սուրբգրյան ընթերցվածքների¹⁷:

Այդոյիսին է եղել նաեւ Սողոմոնի *Տօնականի* բնույթը: Ձեռագրի վերջնադիր հիշատակարանը հայտնում է, որ «ի սկզբան տարւոյն մինչեւ ի կատարումն նորա, որ ունի զընթերցումն գիշերային տաշտամանն, զտերունական տօնից եւ զյիշատակ սրբոց մարգարէից եւ զառաքելոց եւ մարտիրոսաց եւ հայրապետաց եւ թագաւորաց»: Ավելին, Մշո ճառընտիրի նախաբանի օրինակում, որի թերթը գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում, հատակ նշվում է, որ ժողովածուն հարմարեցված է ճաշոցին¹⁸, այսինքն՝ երբ Սողոմոնը գրում էր իր *Տօնականը*, աչքի առաջ ուներ հայոց ճաշոցի վաղագույն մի օրինակ: Նետեաբար՝ նրա ժողովածուի համակարգը, տեքստերի ընտրությունը եւ բաշխումը համադատասխանում էր իր ժամանակվա ճաշոցի համակարգին:

Սա շատ կարեւոր բացահայտում է, որովհետեւ թույլ է տալիս եզրակացնել, որ *Ճաշոցի* զարգացումը գուցահեռ է ընթացել *Տօնականի* զարգացմանը, իսկ վերջինս էլ՝ հետագայում առանձնացած ծիսական գրքերի՝ *Ճառընտիրի*, *Յայսմատուրքի* եւ *Տօնադատմանի* զարգացմանը: Եւ ուրեմն՝ քննելով այս գրքերի ցուցակը, տեքստերի դասավորման համակարգը եւ բովանդակությունը՝ կարելի է առավել ամբողջական տատկերացում կազմել հայոց ճաշոցի զարգացման փուլերի մասին¹⁹:

Ինչդեռ հայտնի է, հայոց *Ճաշոցը*, որ կազմվել է V դ. առաջին քառորդին՝ ըստ Երուսաղեմի ճաշոցի, շատ քիչ հավելումներ է ունեցել մինչեւ XI-XII

դդ.: Այս շրջանում այն հիմնարար փոփոխությունների է ենթարկվել ինչդեպ կառուցվածքային, այնդեպ էլ բովանդակային առումով՝ ոչ միայն հարստացվելով գուտ հայկական բնույթի նոր տոներով եւ դատմական սրբացված կերպարների հիշատակներով, այլ նաեւ բացվելով դեռի բյուզանդական եւ լատինական ազդեցությունները: Մյուս կողմից՝ այն սկսել է կազմվել ոչ միայն ըստ *հռոմեադիր* կոչված հունական օրացույցի, այլեւ ըստ հայկական տոմարի, որ անվանվում է *հայադիր* եւ սկսվում է *նաւասարդով* (օգոստոս):

XII դարից առաջ շատ քիչ թվով ճաշոցներ են մեզ հասել, ուստի այդ ժամանակաշրջանի տօնականներն արժեքավոր վկաներ են համարվում²⁰: Արդ, քանի որ Մշո ճառքնստիր ճաշոցի հիմնարար խմբագրմանը հաջորդած շատ մոտ ժամանակում է ընդօրինակվել, մյուս կողմից էլ՝ իր արխայիկ բնույթով հարագատ է մնացել իր երկու նախկին՝ մամիկոնյանական եւ սողոմոնյան օրինակներին, ուստի այն, փոքրաթիվ այլ տօնականների հետ, անգնահատելի աղբյուր է՝ VIII-XII դդ. ճաշոցների զարգացման ընթացքն ուսումնասիրելու, բայցեւ միաժամանակ՝ Սողոմոնի Տօնականը վերականգնելու փորձ կատարելու համար:

Դրան նդաստում է հատկադես այն հանգամանքը, որ *Ճառքնստիրում* կան մի շարք տոների եւ սրբերի համար քաղված ընթերցումներ ու ճառեր, որոնց համադատասխան հավելումը հայկական *Ճաշոցում* այդ նույն շրջանում (VIII-XII դդ.) կատարված նորամուծություն էր: Այդդիսին են, օրինակ, Առաջավորը, Աթանագինեսի, Ղակոբ Մօքինացու, Թեկդի հիշատակները, Բուն Բարեկենդանի եւ Բարեկենդանի տոների զանազանումը: Իսկ Սողոմոն Մաքենոցացու շրջանին հաջորդած հեղինակների մեջբերումները միշտ ավելացված են յուրաքանչյուր բաժնի տեքստերի վերջին, ինչդեպ, օրինակ՝ Չաքարիա կաթողիկոսի (855-877) ճառերը:

Մշո ճառքնստիրի հաջորդ անգնահատելի արժեքը դատմաբանասիրական ուսումնասիրությունների համար՝ իր տեքստային բովանդակությունն է: Այն դարունակում է 80-ից ավելի հեղինակների մոտ 345 միավոր-նյութ²¹, որոնց թվում հանդիդում են հայտնի աղբյուրների հնագույն օրինակներ կամ եզակի նմուշներ կամ էլ հետագա դարերում արված խմբագրումներից ու միջարկություններից գերծ տարբերակներ, ինչդեպ նաեւ՝ հայ եկեղեցական ավանդույթի տեսանկյունից հետաքրքրագույն խմբագրումներ, մեջբերումներ ու յուրօրինակ դատումներ:

Բերենք մի քանի օրինակ: Ղերակլի դատմության եւ Սուրբ Ըսաչի՝ Պարսկաստան գերության մասին մեջբերված հատվածները Մեքենուի երկից առայծմ հայտնի ամենահին նմուշներն են²²: Աբրահամ Եփեսացու՝ Մարիամի ավետիսին նվիրված ներքողը նրա հայերեն թարգմանությամբ հասած միակ երկն է, որի առաջաբանը դարունակում է դատմական տեղեկություններ Ավետման եւ

Ծննդյան տոների միաժամանակյա ծագման մասին: Անտոն Անադատականի հիշատակին ձոնած՝ Սթանաս Ալեքսանդրացու ճառը տարբերվում է հայտնի նմուշներից եւ թվում է ավելի հին ու ընտիր թարգմանություն, իսկ Սահակ Գ կաթողիկոսի դավանական ճառը լուսաբանված է առանց նորամուտ խաթարումների²³: Նշենք նաեւ Երուսաղեմի Դավիթ թագավորի թագի՝ Կոստանդին կայսերն անցնելու մասին լուսաբանությունը²⁴, որի ամենահեռավոր արձագանքները նշմարվում են Ագաթանգեղոսի մոտ, եւ որը, հավանաբար, հնագույն շաղախ ունի²⁵: Այն հանդիշտում է Ստեփանոս Տարոնացու Պատմության մեջ, որն իր հերթին մեջբերում է այժմ կորած Շաղուհ Բագրատունուն: *Ճառքնտիրում* լուսաբանված տեքստը թվում է ամենահինը եւ ամբողջականը՝ հայտնի բոլոր տարբերակներից:

Նաշվի առնելով *Ճառքնտիրի* արխայիկ բնույթը՝ այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաեւ ձեռագրագիտական եւ հնագրական տեսանկյունից²⁶, ինչդեռ, օրինակ, հսկայաթերթ մագաղաթի մշակումը եւ լուսանկերի անսովոր եւ անկանոն թերթաքանակը, տեքստի բավական արտառոց՝ եռալայն բաշխումը թերթի վրա, էջերի եւ լուսանկերի յուրօրինակ համարակալումը, որ սկսվում է այբուբենի տառերի դարձ հերթականությամբ եւ 36-ից հետո շարունակվում դրանց թվային արժեքներով, եւ վերջապես՝ խոշոր ուղղագիծ երկաթագիրը՝ տառերի գրության հատկանշական ձևերով (նկ. 2), լուսանցքը հավասարելու նդատակով տողերի վերջին տառերի կամ վանկերի անջատումով, բարձր վերջակետերով եւ այլն²⁷:

Վերջապես՝ հայ միջնադարյան արվեստի լուսաբանության համար առանձնահատուկ կարեւորություն ունեն *Ճառքնտիրում* լուսաբանված մանրանկարները, քանի որ դրանք XIII դարից մեզ հասած ամենաառաջին նմուշներից են եւ ուստի՝ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում թե՛ ռճական փոխազդեցությունների իմաստով, թե՛ լուսանկարական հնագույն տիպերի փոխանցման ուղիների առումով եւ թե՛ լուսանկերների ու ծիսակարգի սերտ փոխառնությունների տեսանկյունից: Ըստ մասնագետների կարծիքի՝ ձեռագրի մանրանկարները հավանաբար երեք տարբեր վարդեսների աշխատանքի արդյունք են, չնայած միայն մեկի՝ Ստեփանոսի անունն է հասել մեզ, տիպոգրաֆերի էջի ձախ կողմում²⁸:

Լուսաբանված թեմատիկ տեսարանները չորսն են. «Քրիստոսը գահին բազմած», «Մկրտություն» եւ «Ծնունդ» հորինվածքները լուսանկարված են տիպոգրաֆերի հանդիմակաց էջին՝ ձեռագրի սկզբում (էջ 1բ), իսկ «Մուտք Երուսաղեմ» դրվագը գետնով է տեքստի մեջ (էջ 252բ): Թեմատիկ տեսարանների կուռ եւ հավասարակշռված հորինվածքը, կոթողայնությունը, գունային բաշխումը վկայում են վաղքրիստոնեական մանրանկարչական ավանդույթների հետ աղերսների մասին²⁹:

«Գահին բազմած Քրիստոսը» եւ «Մկրտությունը» լուսանկարված են էջի վե-

րելի մասում, կողք կողքի, առանձին շրջանակների մեջ, իսկ ներքեւի ամբողջ տարածքը զբաղեցնում է «Ծննդյան» տեսարանը (գում. Պատկ. 1): Ցավոք, մանրանկարների էջը գրեթե կիսով չափ վնասված է, եւ չի երեւում, թե ինչ է Պատկերված Քրիստոսի գահից եւ Ղիսուսի մսուրից ձախ կողմ եղած մակերեսին: Վերջինի վերաբերյալ՝ Բեթղեհեմի քարանձավի Պատի կողքին երեւացող թագակիր գլխի հատվածը հուշում է, որ տեսարանի ձախ կորսված մասը Պատկերել է երկրորդության եկած մոգերին, որոնց խումբը թե՛ թեմատիկ եւ թե՛ հորինվածքային առումով կոչված էր արձագանքելու տեսարանի աջ կողմում նկարված հովիվներին³⁰: Քրիստոսի գահի կողքին մագաղաթի ելուստի վրա երեւացող կարմիր ժաղապենաձեւ հատվածը մեկնաբանելով որդես Տիրամոր նստոցի վերնամասը՝ Սիրարփի Տեր Ներսեսյանը ենթադրում է, որ այդտեղ Պատկերված է եղել «Ավետման» տեսարանը³¹: Եթե անվանի արվեստաբանի ենթադրությունը ճիշտ է, ապա մեկ էջի վրա հավաքված տերունական այս տեսարանները գաղափարապես կաղվում են իրար՝ ներկայացնելով Քրիստոսի Ղայտնության խորհուրդն ամփոփող Պատկերագրական միասնական միավոր. գահին բազմած Քրիստոսի ձեռքին Պատկերված գրքի «Եւ եմ լույսն աշխարհի» մեջբերումը, թվում է, այդ խորհրդաբանության բանալին է:

Ման խմբավորումը Պատահական չէ եւ արտահայտում է հայոց ծիսակարգի դավանական առանձնահատկություններից մեկը՝ Ծննդյան եւ Մկրտության տոների միասնական կատարումը՝ Ղայտնության տոնի ներքո, որով, հունվարի 6-ին, սկսվում է հայկական ծիսական տարին³²: Մամանատիղ խորհրդաբանությամբ Պատկերագրական խմբավորման վաղագույն օրինակը Էջմիածնի Ավետարանում գետեղված եւ VI-VII դարերով թվագրվող երկու թերթերն են (նկ. 3-6), որոնք հաջորդաբար ներկայացնում են «Չաքարիայի ավետումը», «Մարիամի ավետումը», «Մոգերի երկրորդությունը» եւ «Մկրտությունը»³³: Այս համակարգը հավանաբար ձեւավորվել է այն բանից հետո, երբ Ղայոց եկեղեցին, ի տատասխան V դարի վերջին Ղիսուսի Ծննդյան տոնը դեկտեմբերի 25-ին տեղափոխելու եւ հունվարի 6-ին Մկրտության տոնը նշելու իրողության, եւ ըստ այդմ՝ ի հաստատումն իր քրիստոսաբանական դիրքորոշման՝ VI դարից սկսյալ «Ղայտնության» անվան տակ հունվարի 6-ին միասնաբար նշում է Ծննդյան եւ Մկրտության տոները³⁴: Նամադատասխանաբար, Ղայոց ճաշոցում ի սկզբանե ութ օր տեւող այդ տոնի ընթերցվածքների շարքում գտնում ենք ավետարանական հատվածներ բոլոր չորս տեսարանների մասին³⁵:

Մշո ճառընտիրում նույն ութօրյա կարգում զուգահեռաբար ծաղկաբաղ է արված հայրաբանական ճառերից, ներբողներից եւ մեկնություններից, որոնց գերակշիռ մասը վերաբերում է Ղայտնությանը, Ավետմանը, Քրիստոսի Ծննդյանը եւ Մկրտությանը, Մարիամ Աստվածածնի փառաբանությանը: Նետաքր-

քիր է, որ Չաքարիայի ավետմանը նվիրված որեւէ հատված չկա, փոխարենը՝ մեկ մեջբերում կա Մարիամի ողջույնը Եղիսաբեթին մեկնությունից³⁶: Ավելին, հինգերորդ օրվա ընթերցվածքների շարքում առկա է Սաղմոսների մեկնության հինգ խումբ, որտեղ մեջբերված «Այլ ինքն Միածին որդւոյ թագաւորեալ ի վերայ ամենայն աշխարհայ եւ նստեալ յաթոռ փառաց» տողը³⁷ կարող է լուսաբանել մանրանկարների լուսանկարագրական խմբում «Քրիստոսը գահին բազմած» տեսարանի առկայությունը՝ «Չաքարիայի ավետման» փոխարեն: Մեկ այլ նշանակալի լուսանկարագրական մանրամասն է «Ծննդյան» տեսարանում Մարիամի նստած դիրքը. այն խորհրդանշում է անցավ ծննդաբերությունը³⁸, որ արտահայտում է Նիսուսի աստվածային էության հայտնության քրիստոսաբանական դիրքորոշումը եւ այդու՝ կրկին կառվում հայոց Նայտնության տոնի դավանական եւ ծիսական առանձնահատկությունների հետ:

Ոչ միայն հետաքրքիր մանրամասներ է դարձնակում «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը (գուն. լուս. 2): Նախ՝ տեքստի մեջ գետնի վրա տեսարանային լուսանկարները հայ արվեստում չափազանց հազվադեպ են լուսանկարում մինչեւ XIII դարը եւ աղերսվում են վաղքրիստոնեական հնագույն ավանդույթների հետ: Այդ աղերսներն արտահայտվում են նաեւ Քրիստոսի կարճամորուս դեմքով կերպարում, առաքյալների դիրքերում եւ Երուսաղեմի լուսանկարման մեջ³⁹: Վերջինն արժեքավոր է հատկապես ճարտարապետական գծագրի լուսանկարման իմաստով, որ, թվում է, բավական ճշգրտորեն վերարտադրում է Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված սրբարան-տնակի՝ դարերի ընթացքում կրած փոփոխություններից մի առանձին եւ թվագրվող դրվագի նկարագիրը (նկ. 7, 8)⁴⁰: Այս առումով անշափ ուշագրավ է մեջբերել այն փաստը, որ Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված սրբարան-տնակի ճարտարապետական այս տիպը Մշո ճառընտիրին անմիջապես նախորդող լուսանկարման ժամանակաշրջանում թե՛ բովանդակային, թե՛ գեղարվեստական առումով կիրառվել է Նայաստանում՝ նոր ձեւավորվող գավիթ-ժամատների կառուցվածքում⁴¹ (նկ. 9, 10):

Պակաս նշանակալի չէ նաեւ ձեռագրի զարդանախշային համակարգը՝ տիտղոսաթերթի խորանագարդի, լուսանցազարդերի եւ գլխատառերի ճոխ եւ նրբամշակ, բայցեւ միաժամանակ՝ կոթողային բնույթով, հարուստ երանգավորված ներկադրանակով, մեղալիոններում ընդգրկված իրական եւ երեւակայական կենդանիներով եւ թռչուններով, խիստ ոճավորված բուսական մոտիվներով, որոնք իրար ներդաշնակում են, բայց երբեք չեն կրկնվում⁴² (Էջ 2ա, գուն. լուս. 3): Չարդային այս ամբողջ զանազանի առավել հատկանշական երեւույթը հին ավանդական ձեւերի եւ նորամուտ մոտիվների համադրությունն է: Միաժամանակ, նկատվում է նույն դարաշրջանի մահմեդական արվեստի եւ կլիկյան մանրանկարչության որոշ տարրերի ազդեցությունը: Տարածին ու տարաբնույթ

զարդամոտիվները ծաղկողների բեղուն երեսակայության եւ մեծ վարդեստության արդյունքում միահիյուսվել են ներդաշնակ համակարգի մեջ, որ որդես հիմք է ծառայել լուսանցազարդերի կամ գլխազարդերի տարբեր հիմնական տիպերի ձևավորման համար:

Այստիսով, Մշո ճառքնտիրը վերարտադրել եւ փոխանցել է հայկական հնագույն թատկերագրական ավանդույթների հազվագյուտ եւ արժեքավոր նմուշներ, որոնք օգնում են խորացնելու հետազոտությունները՝ հայկական ծիսական գրքերում տեղ գտած մանրանկարների թատկերագրական համակարգի եւ հայոց ծիսակարգի առանձնահատկությունների հետ դրանց կառույցի, երուսաղեմյան սրբազան նախօրինակների կիրառման թատմության եւ թատկերագրության⁴³, ինչոես նաեւ հայկական զարդանախշային արվեստի ձևավորման ու զարգացման վերաբերյալ: Բացի այդ, ձեռագրի մանրանկարները սակավաթիվ վկայություններից մեկն են՝ XII-XIII դարերի սահմանագծին Բարձր Նայքի մանրանկարչության մեծարվեստ ավանդույթների մասին:

Ամփոփելով խոսքը՝ կարելի է վստահաբար ասել, որ Մշո ճառքնտիրը հազվագյուտ արժեքավոր ձեռագիր է հայագիտության տարբեր ոլորտների տեսանկյունից, եւ ուստի մատյանին նվիրված առանձին, հանգամանալի եւ միջգիտակարգային հետազոտությունների՝ մենագրության տեսքով հրատարակումն առավել քան կարելու է եւ արդիական:

1 Ա. Մաթետոյան, «Ե՞րբ եւ որտե՞ղ է գրվել Մշո Տօնական-ճառքնտիրը», *Բանբեր Մատենադարանի*, 9 (1969), էջ 137-162:

2 Անդ: Միշել վան Եսբրուեկ ձեռագրի բաժանման համար նշում է XVII դարը (M. van Esbroeck, «Description du répertoire de l'Homélaire de Muš», *Revue des études arméniennes*, XVIII (1984), pp. 237-280).

3 *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադ.*, հտ. 1, Եր., 1965, սյուն. 107:

4 Ձեռագրի թատմության մանրամասների համար շնորհակալություն եմ հայտնում Մատենադարանի ցուցասրահների տնօրեն տիկ. Վիդա Չարախչյանին:

5 Կտակի բովանդակությունը՝ ծանոթագրություններով, տես Ղ. Ալիշան, *Չայադատում*, Բ, էջ 98-99:

6 Կոստանդինի Կտակի մասին վերջին հանգամանալի ուսումնասիրությունները տես՝ G. M. Vian, *La donazione di Costantino*, Bologna, 2004:

7 Լուսավորչի Կտակին առանձին ուսումնասիրությամբ կանդրադառնանք հետագայում:

8 Ա. Մաթետոյան, «Մշո Տօնական-ճառքնտիրը»:

9 Անդ: Տես նաեւ S. Der Nersessian, *L'Art Arménien*, Paris – Neuchatel 1977, p. 210.

10 Ա. Արհաանյան, «Ռութն-եղիմի ջախջախումը», *Տեղեկագիր ՍՄՅՄ ԳԱ հայկական ֆիլիալի*, 1941, n. 5-6 (10-11), էջ 77-83:

11 Մաթետոյան, «Մշո Տօնական-ճառքնտիրը»:

12 Մաթետոյան, Անդ: M. van Esbroeck, «Salomon de Mak'enoc', vardapet du VIII^e siècle», *Armeniaca* (Mélanges d'études arméniennes), Venise 1969, pp. 33-44.

- 13 Կարելի է համեմատել, օրինակ՝ Մատ. 993 (1456 թ.) եւ Փարիզի BN 110 (1194 թ.): Այս օրինակների մասին տես վան Եսբրոեկի արդեն մշակած հոդվածը՝ «Description du répertoire de l'Homélaire de Muš», եւ հատկապես՝ M. van Esbroeck, U. Zanetti, «Le manuscrit Erevan 993. Inventaire des pièces», *Revue des études arméniennes*, 12 (1977), p. 123-167.
- 14 Մատենադարան 2271 (1724 թ.), 215ա-բ, տես Ա. Մաթետյան, «Մշո Տօնական-ճառընտիր...»
- 15 Մաթետյան, անդ:
- 16 M. van Esbroeck, «Description du repertoire de l'homélaire de Muš».
- 17 Ch. Renoux, «Čašoc' et Tōnakan arméniens: dépendance et complémentarité», *Ecclesia Orans* 4, 1987/2, pp. 169-201.
- 18 Անդ:
- 19 Անդ: Տես նաեւ Ch. Renoux, *Le Lectionnaire de Jérusalem en Arménie: Le Čašoc'. I. Introduction et liste des manuscrits*, PO 44/4, n° 200, pp. 11-72 (425-486) եւ III. *Le plus ancien casoc cilicien le Erévan* 832, PO 49/5, n° 221, pp. 19-42 (537-560).
- 20 Անդ:
- 21 van Esbroeck, «Description du repertoire de l'homélaire de Muš».
- 22 Աբգարյան, Գ. Վ., «Սեբեոսի դաստիարակումը» եւ Անանունի առեղծվածը, Եր., 1965, էջ 29:
- 23 Բ. Բ. Սարգիսեան, *Սայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի Վենետիկ*, Բ, 1924, ս. 440, 444, 449:
- 24 van Esbroeck, «Description du repertoire de l'homélaire de Muš », n° 254; Սարգիսեան, *Սայր ցուցակ*, ս. 459-460:
- 25 Garibian N., «Costantino nella tradizione ecclesiastica armena», *Enciclopedia Costantiniana sulla figura e l'immagine dell'imperatore del cosiddetto Editto di Milano*, Enciclopedia Italiana Treccani, Roma 2013, vol. II, pp. 441-461; տես նաեւ՝ Ն. Ղարիբյան, «Կոստանդին Սեօի կանոնը եւ դասերը հայոց ծիսական ավանդույթում», *Բանբեր Մատենադարանի* 22 (2015), 281-302:
- 26 M. van Esbroeck, «Description du repertoire de l'homélaire de Muš».
- 27 Մ. Սթոուն, Տ. Կոլունջյան, Դ. Լեմանն, *Հայկական հնագրությունն ալթոն* (թարգմ. անգլերեն հրատ. Օրիոն, 2002), էջմիածին, 2006, թիվ 51, էջ 220:
- 28 E. Korkhmazian, I. Drambian, H. Hakobian, *Armenian Miniatures of the 13th and 14th centuries*, Leningrad, 1984, p. 9 & 35, pl. 1-2. Վ. Ղազարյան, Դ. Հակոբյան, *Հայ միջնադարյան կերպարվեստի դաստիարակումը*, Եր., 2012, էջ 74-75:
- 29 Korkhmazian, Drambian, Hakobian, *Armenian Miniatures...*, p. 9 & 35, pl. 2.; Ղազարյան, Հակոբյան, *Հայ միջնադարյան կերպարվեստ*, էջ 75:
- 30 S. Der Nersessian, *L'Art arménien*, p. 221-224.
- 31 Անդ:
- 32 Այս մասին տես՝ Ch. Renoux, «L'Épiphanie à Jérusalem au IVe et au Ve siècle », *Revue des Etudes Arméniennes*, II (1965), p. 343-359; Նույնի՝ *Le Lectionnaire de Jérusalem en Arménie: le Čašoc'. I. Introduction et liste des manuscrits*, PO 44/4, n. 200, Turnhout 1989, p. 428-433; Տես նաեւ՝ Շ. Որնոն, Ն. Ղարիբյան, «Հեթում արքայազնի ճաշոցը բացող սրբի դասերի ինքնության շուրջ», *Էջմիածին* 2016/Ե, էջ 41-53:
- 33 Th. Mathews, "The Early Armenian Iconographic Program of the Edjmiatsin Gospel (Mat. MS 2374)", *Art and Architecture in Byzantium and Armenia: Liturgical and exegetical approach*, Variorum Collected Studies Series 510, Aldershot 1995, pp. 199-215.
- 34 Որնոն, Ղարիբյան, «Հեթում արքայազնի ճաշոցը...»
- 35 Mathews, "The Early Armenian Iconographic Program..."; Ավետարանական իդոնների համար տես՝ Ch. Renoux, *Le Lectionnaire de Jérusalem en Arménie: le Čašoc'. II. Edition synoptique des plus anciens témoins*, PO 48/2, n° 214, pp. 149-156:
- 36 van Esbroeck, «Description du repertoire de l'homélaire de Muš », n° 45.
- 37 Անդ, n° 35:
- 38 Ղազարյան, Հակոբյան, *Հայ միջնադարյան կերպարվեստ*, էջ 75:
- 39 Korkhmazian, Drambian, Hakobian, *Armenian Miniatures...*, pl. 2.

- 40 Քրիստոսի գերեզմանի ճարտարապետական զարգացման մասին տե՛ս՝ M. Biddle, *The Tomb of Christ*, Sutton Publishing Ltd, Hong Kong, 1999:
- 41 А. Казарян, "Новый Иерусалим" в пространственных концепциях и архитектурных формах средневековой Армении", *Новые Иерусалимы. Иеротопия и иконография сакральных пространств*, под ред. А. Лидов, Москва 2009, стр. 520-543; E. Vardanyan, "The Zhamatun of Horomos and the Zhamatun/gawit structures in Armenian architecture, *Horomos Monastery. Art and History*, ed. E. Vardanyan, Collège de France, Monographies 50, Paris 2015, p. 207-236, հատկապես՝ 227-234:
- 42 S. Der Nersessian, *L'Art arménien*, p. 221-224; E. Korkhmazian, I. Drambian, H. Hakobian, *Armenian Miniatures of the 13th and 14th centuries*, Leningrad, 1984, p. 9, pl. 1-2. Ղազարյան, Հակոբյան, Հայ միջնադարյան արվեստ, էջ 75:
- 43 «Մշո ճաղընտիրի մանրանկարների ուսումնասիրությունը՝ հայոց ճաշոցների լուսավերագրական համակարգի համատեքստում» թեմային առանձին հրադարակմամբ կանդիդատական և մոտադրական, իսկ երուսաղեմյան սրբազան մախօրինակների մասին հետազոտությունները մեր ուշադրության կենտրոնում են վերջին տասնհինգ տարիների ընթացքում:

LA VALEUR DE L'HOMÉLIAIRE DE MOUSH POUR LES ÉTUDES ARMÉNIENNES

NAZÉNIE GARIBIAN

Docteur en histoire de l'art (Paris)

Matenadaran, Professeur associé à l'YAFA

L'Homélaire de Moush, le plus grand manuscrit arménien connu, qui occupe une place honorable dans l'exposition du Musée de Matenadaran, représente une valeur singulière pour les études arméniennes. Il contient le Mémorial des archives du monastère des Apôtres de Moush, des colophons qui rapportent d'importants renseignements historiques, le Testament de saint Grégoire l'Illuminateur, qui est un document singulier dans la culture arménienne. Les colophons ont permis de constater que la copie originale du manuscrit remonte jusqu'au VIII^e siècle et que l'Homélaire représente un anneau intermédiaire rare dans la genèse des livres liturgiques arméniens. Non moins important est le contenu textuel du codex dont les 345 pièces ont conservé des exemples très anciens des auteurs arméniens et des traductions des sources chrétiennes connues, des exemples rares et des rédactions qui n'ont pas subi des modifications et interventions des siècles ultérieurs. La nature archaïque du manuscrit le rend intéressant également du point de vue codicologique et paléologique. Enfin, les miniatures du codex représentent une importance particulière pour l'histoire de l'art médiéval. Elles sont composées de riches ornements et de quatre scènes thématiques. Elles témoignent des influences stylistiques, des voies de transition des anciens types iconographiques et des relations étroites qui existent entre les images et les rites liturgiques.

ЗНАЧЕНИЕ МУШСКОГО ГОМИЛИАРИЯ ДЛЯ АРМЕНОВЕДЕНИЯ

НАЗЕНИ ГАРИБЯН


Доктор истории искусства (Париж)


Матенадаран, Доцент ЕГХА

Мушский гомилиарий - самая большая армянская рукопись, занимающая почетное место в экспозиции Матенадарана, - имеет исключительное значение для арменоведения. Рукопись содержит Главный архивный Мемориал монастыря Св. Апостолов Муша, колофоны с важнейшими историческими сведениями, и, своего рода, уникальный в армянской культуре документ - Завещание св. Григория Просветителя. Колофоны позволили выяснить, что оригинальная копия рукописи восходит к VIII столетию и, что Гомилиарий представляет собой редкое промежуточное звено в истории происхождения армянских литургических книг. Большой интерес представляет также текстовое содержание рукописи: среди 345 единиц сохранились древнейшие образцы творений армянских авторов и переводы известных общехристианских источников: редчайшие образцы и редакции, дошедшие до нас без изменений и интерполяций последующих столетий. Архаический характер Гомилиария придает большую ценность кодексу и с точки зрения палеографии и кодикологии. И наконец, особый интерес для истории средневекового искусства представляют миниатюры Гомилиария, выполненные в богатом орнаментальном стиле и включающие четыре тематические сцены. Все это свидетельствует о стилистических взаимодействиях, путях передачи иконографических типов и тесных связях между изображениями и литургическими церемониями.



1. Մշո ծաղընտիր ձեռագրի ցուցադրությունը Մատենադարանի թանգարանում, Մատ. 7729, 1202 թ.
2. Մշո ծաղընտիրի երկաթագիրը





3. Չաքարիայի ավետումը, VI-VII դդ., էջմիածնի Ավետարան, Մատ. 2374, 989 թ., էջ 228ա

4. Ավետում, VI-VII դդ., էջմիածնի Ավետարան, Մատ. 2374, 989 թ., էջ 228բ

5. Մոգերի երկրորդազույրում, էջմիածնի Ավետարան, Մատ. 2374, 989 թ., էջ 229ա

6. Սկրտություն, էջմիածնի Ավետարան, Մատ. 2374, 989 թ., էջ 229բ



7

7. Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված տաճարիկը XI-XIV դարերում՝ ըստ Մարտին Բիդլի վերակազմության
8. Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված տաճարիկի վերարտադրությունը Հարություն տեսարանում, Ավետարան, Մատ. 2744, Արժեշ 1305 թ., էջ 6ա
9. Հոռոմոսի վանքի Սուրբ Հովհաննես եկեղեցու գավիթը, 1038 թ., վերատոմ. E. Vardanyan, ed., The Monastery of Horomos, Paris 2015, fig. II.86.a
10. Հոռոմոսի վանքի Սուրբ Հովհաննես եկեղեցու գավթի սյունազարդ գմբեթը, 1038 թ., վերատոմ. E. Vardanyan, ed., The Monastery of Horomos, Paris 2015, fig. II.88



8



9



10